Կայսերական Պանգայի տնօրէն Դ. Ֆօսթըրի նախագահութեամբ կազմուած մասնախումբի մը հսկողութեան ներքեւ ի նպաստ այն աղքատ Հայ վարժարանաց, զորս կը խնամեն Միացեալ ընկերութիւնք Հայոց. Այս կրթական եւ Մարդասիրական գործքին իւր կողմէ նիւթական նպաստ մը եւս ընելով Ն. Կ. Վ. բարեհաճեցաւ 150 Օսմանեան ոսկի շնորհել.

—Բերկրութեամբ կը ծանուցանեմք թէ Պետական խորհրդոյ օրէնսդիր ճիւղն, որ բաւական ժամանակէ ի վեր կը զբաղուէր Զուլիչ Տիգրանի ժառանգաւորաց դատին առթիւ ծագած ամուսնական—ժառանգական խնդրոյն քննութեամբ, այս օրերս Վսեմապատիւ Խալիտ Պէյի նախագահութեամբ գումարուած մէկ նստի մէջ, միաձայնութեամբ ի նպաստ Պատրիարքարանի պահանջման որոշում տուած է, ազգային բաղձանաց համեմատ լուծում մը տալով ազգային եկեղեցական առանձնաշնորհմանց վերաբերեալ կարեւորագոյն խնդրոյ մը.»

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Փետրուարի 10ին № 67՝ հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Բարեկրօն Պետրոս քահանայ Սարգսեանին եւ պատուելիք՝ երեցփոխ Միքայէլ Գուլումեանցին եւ Վահան Գրիգորեանին՝ Փիր գիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ եկեղեցական—ծխական տղայոց միդասեան ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ.

—

Ազգիս Վեհափառ Հայրապետը Փետր. 10 № 68 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Բարեկրօն Պօղոս քահանայ Եպիսկոպոսեանցին եւ Պատուելիք՝ երեցփոխ Պօղոս Կարապետեանին եւ բժիշկ Եագոր Գրիգորեան Յովհաննիսեանցին՝ Բանանց գիւղի եկեղեցական—ծխական տղայոց միդասեան ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ.

—

19 Յունուարի. Բագուայ Բարեկ. գործակալն ուղարկել է յօգուտ Ճեմարանի Պ, Խաչատուր Կիրինեանցից ստացուած նուէր՝ 10 րուբլի.

—

22 Յունուար. Երեւանցի հանգուցեալ Մկրտիչ Խաչատրեան Սանահեանց թողել է կտակ, որով իւր հինգ քարեայ գրպակները, հանդերձ ներքնատամբ, արքունական փողոցի վրայ, թողնում է քաղաքի Հայոց Սուրբ Աստուածածին Եկեղեցուն, խնդրելով հոգեհանգիստ կատարել իւր եւ իւրայնոց համար տարին երկու անգամ, իւր մարմինը թաղել Ս. Աստուածածնի բակում եւ կրպակների վարձադրամից մաս հանել մի սան եւ մի սանուհի պահելու համար Երեւանի Հայոց դպրոցներում.

—

22 Յունուարի. Ղարաբաղի թեմի Կուսապատ գիւղի Խաչատուր քահանայ Տէր Եղիազարեանցը, գործած ծանր յանցանքների համար, պատժւում է

ուղարկուելով յապաշխարութիւն Զարեբայ անապատը երկամեայ ժամանակով։

—

25 Յունուարի. Ախալքալակի Խորէն Աւագ Քահանայ Բարսեղեան, նախկին Դործակալ, մեղադրուում էր աթոռահաս գումարներ գաղելում և երկար տարիներ գանուում էր քննութեան տակ։ Այժմ Ս. Սինոդը հիմնուելով վերջին քննութեանց վերայ և աչքի առաջ ունենալով յիշեալ Աւագ քահանայի երկարատև ծառայութիւնները—հրամայեց. պատասխանատու ճանաչել նորան միայն 1821 բուբլու (քննչի ծախսն էլ հետը) և հրամանագրել Թիֆլիսի վիճակային Կոնսիստորիային՝ 3—4 տարուայ ընթացքում պտանալ մաս մաս այդ գումարը յիշեալ քահանայից, թողնելով նորան իւր պաշտօնի մէջ։

29 Յունուար. Վլադիկավկազի բնակիչ Հանգուցեալ Գրիգոր Բազդասարեանց կտակել է յօգուտ և ի ժառանգութիւն Վլադիկավկազու Հայոց Ս. Գրիգոր Եկեղեցուն իւր բոլոր շարժական և անշարժ կայքերը (5 տուն, արծաթեղէն, 2000 ր. առ ձեռն դրամ և 30000 ր. չափ պարտք, անները գրուած են գրուած) մանրամասն պայմաններով, պարտքերը վճարելու, տարին մի անգամ պատարագ մատուցանելու իւր հոգւոյ փրկութեան համար և էն։

—

29 Յուն. Ալէքսանդրապոլու Կարապետ քահանայ Տէր Յարութիւնեանց ենթարկուումէ մի ամեայ եկեղեցական ապաշխարանաց, իւր անկարգ ընթացից համար։

—

29 Յուն. Ալէքսանդրապոլու Խորէն քահանայ Աբգարեանց տեղւոյն հոգևոր Կառավարութեան նախանդամ բար. Յովսէփ աւագ քահանայ Դոստանեանցի վրայ տուած անտեղի բողոքագրի պատճառով, կարգադրութեամբ Երևանայ թէմական փոխանորդ Դեր. Սուքիաս Եպիսկոպոսի Պարզեանց և հաստատութեամբ Ս. Սինոդի՝ ենթարկուումէ յետ քննութեան, երկամեայ եկեղեցական ապաշխարանաց, եկեղեցւոյ դրանը՝ «փիլոն ի յուսն և սաղմոս ի ձեռին»։

—

29 Յուն. Ապօրինի պսակ կատարելներուն համար պատժուում են՝ Յարութիւն քահանայ Տէր Գրիգորեան՝ Դիլիջանու և Թարտիրոս քահանայ Իսահակեանց Արազդագեան գիւղի Երևանայ թէմի. առաջինը դադարեցուցանելով քահանայագործութիւնից, ապաշխարութեան ենթարկել երեք տարով Հաւրիճոյ (Ղփչաղ) վանքում. երկրորդը նոյնպէս՝ հրաժարեցուցանելով քահանայագործութիւնից երեք տարով ուղարկել յապաշխարութիւն Նախիջևանու Կարմիր վանքը. Կատարուած պսակն անվաւեր համարել. Կրկնամուսին Ադամեանցին ենթարկել օրինաւոր դատաստանի համաձայն 1011 և 1013 յօդ. կանոնադրութեան քրեական դատաստանավարութեան, 1875 ամի։